

Հայաստան

Հուլիս- սեպտեմբեր, 2022 թ.

2022 թ. սեպտեմբերի 13-ին հայ-ադրբեջանական պետական սահմանին իրավիճակի սրուվից ի վեր՝ ՄԱԿ ՓԳՀ-ն իրավական **պաշտպանության մշտադիտարկման առաքելությամբ** ինն այց է կատարել Հայաստանի տուժած վայրեր: ՄԱԿ ՓԳՀ-ն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը եւ ՊՅԾ-ն տեղահանված անձանց կարիքների **արագացված գնահատում** են իրականացրել:

ՄԱԿ ՓԳՀ-ն մոտ 100 մասնակիցների հետ իրականացրել է ամենամյա **մասնակցային գնահատումը՝** համաձայնեցնելով պետական եւ ոչ պետական գործընկերների հետ: Գնահատումն օգնեց ավելի լավ պատկերացնել եւ վերլուծել տեղահանված անձանց կարիքներն ու խնդիրները:

ՈՒԵՖԱ-ի կողմից ֆինանսավորվող **«Ինտեգրում ֆուտբոլի միջոցով»** ծրագիրը՝ տեղահանված եւ տեղացի երեխաների համար եւ իրականացվում էր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից՝ ՄԱԿ-ի ՓԳՀ-ի հետ համատեղ, ամփոփվեց Երեւանում, 2022 թ. հուլիսի 30-ին անցկացված «Համերաշխության գավաթի» մրցաշարով:

ԱՌԱՏՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

392 հեռախոսազանգ

263 անձանց կողմից կատարվել է ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին, որը սպասարկում է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր ԿԱՁԱ հիմնադրամը: Մտահոգության հիմնական թեմաները վերաբերում էին ապաստանի ընթացակարգերին, կացարանի հասանելիությանը, ինչպես նաեւ դրամական աջակցությանը: ՄԱԿ ՓԳՀ-ն ստացել է 157 էլ-նամակ, 16 գրություն, տրամադրել է խորհրդատվություն 21 անհատի:

2,854 անձի

սոցիալական եւ իրավաբանական ծառայություններ է տրամադրել ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն:

267 անձի

տրամադրվել է կենսապահովման աջակցություն. նրանցից 84-ը ստացել են եկամտի ստեղծման գործիքներ (իրականացրել է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը):



Ներքին տեղահանության ենթարկված կինը ստանում է ՄԱԿ ՓԳՀ օգնությունը հյուրընկալող Վարդենիս համայնքի բաշխման կենտրոնում: Սեպտեմբեր 2022թ. © ՄԱԿ ՓԳՀ/Անահիտ Հայրապետյան

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (ԱՌ 2022 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Ֆինանսական պահանջներ*

\$13.8 մլն

Պակասող ֆինանսավորում \$10.1 մլն



* Հայաստանի դեպքում ֆինանսական պահանջները ներառում են ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակի կանոնավոր ծրագրի եւ Ուկրաինայի իրավիճակին արձագանքման պահանջները

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՂ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ* 2022 Թ. ՀՈՒՆԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



* Ներառում է փախստականի իրավիճակում գտնվող անձանց. Աղբյուր՝ ՄԱԿ ՓԳՀ տվյալների որոնման հարթակ.

Գործառնական համատեքստ

Պաշտպանության հիմնական գործողություններ

2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է իր նպաստը բերել փախստականներին վերաբերող համապարփակ օրենսդրության մշակմանը, տեղահանված անձանց հետ աշխատող Միգրացիոն ծառայության, սահմանապահների, դատական համակարգի եւ Հանրային պաշտպանի գրասենյակի իրավաբանների կարողությունների զարգացմանը:

- Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում ՄԱԿ ՓԳՀ-ն ՀՀ Միգրացիոն ծառայության հետ միասին միջգերատեսչական ֆորում է ստեղծել՝ վերանայելու միջազգային պաշտպանության մասին օրենսդրությունը: Հիմնադրման օրվանից ՄԱԿ-ի ՓԳՀ-ն օգնել է շահակիցների միջև երկու հանդիպումների կազմակերպմանը, որոնց նպատակն էր քննարկել բացերը եւ առաջարկություններ ներկայացնել:
- Ապաստան հայցողների համար իրավաբանական օգնության հասանելիությունն էլ ավելի ամրապնդվեց փախստականների մասին օրենսդրության բարդ խնդիրների ոլորտում դատական համակարգի կարողությունների զարգացման եւ Փաստաբանների պալատի հետ բազմամյա համագործակցության ծրագրի մեկնարկի միջոցով: Ուկրաինայից ժամանած ապաստան հայցողների թվի աճի պայմաններում ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնեց Միգրացիոն ծառայությանը տրամադրվող փորձագիտական աջակցությունը եւ նպաստեց Շվեդիայի միգրացիոն գործակալության հետ ապաստանի դիմումների արդյունավետ մշակման թեմայով փորձի փոխանակմանը:
- Սեպտեմբերի 24-25-ը ՄԱԿ ՓԳՀ-ն «Փախստականների մասին» օրենքի խրթին հարցերին նվիրված աշխատաժողով կազմակերպեց վարչական դատարանի 12 դատավորների համար:
- Գորիս (օգոստոսի 2-3-ին) եւ Ջերմուկ (սեպտեմբերի 8-9-ին) քաղաքներում տեղի ունեցան արտակարգ իրավիճակներին պատրաստվածության թեմայով աշխատաժողովներ: Մասնակցեցին Սյունիքի եւ Վայոց ձորի մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, ճյուղային նախարարությունների եւ համայնքապետների, միջազգային ու տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Անցկացվեցին վերապատրաստման դասընթացներ ՄԱԿ ՓԳՀ մանդատի, արտակարգ իրավիճակներում պաշտպանության լայնածավալ միջոցառումների, տվյալների կառավարման, ռիսկերի գնահատման եւ հոգեբանական առաջին օգնության վերաբերյալ:



Երիտասարդության միջազգային օրը՝ 2022 թվականի օգոստոսի 12-ին հայտնի լուսանկարիչ եւ անիմատոր Արեգ Բալայանը «Հայաստանի 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ճանաչված Հրազդանում բնակվող տեղացի ու տեղահանված երեխաների եւ երիտասարդների համար վարպետության դաս անցկացրեց: Լուսանկարը © ՄԱԿ հաղորդակցության թիմ

Գծապատկեր. հուլիս– սեպտեմբեր 2022 թ.



917 մտահոգության ներքո գտնվող անձ, ըստ խոցելիության աստիճանի, դրամական օգնություն է ստացել, ներառյալ բնակարանների վարձավճարների սուբսիդավորում, բազմանպատակ դրամական հատկացումներ, դպրոցի վարձավճարի սուբսիդավորում եւ փոխադրավարձի տրամադրում:



688 մտահոգության ներքո գտնվող անձի առողջապահական ծառայություններ են տրամադրվել:



420 մտահոգության ներքո գտնվող անձ բժշկական օգնություն է ստացել:



184 մտահոգության ներքո գտնվող անձ ստացել է իրավաբանական խորհրդատվություն եւ աջակցություն:



20 տեղահանված երեխայի եւ գենդերահեն բռնության 15 զոհի դեպքերի մասնագիտացված կառավարման աջակցություն է տրամադրվել:



27 տեղահանված տարեցների եւ հատուկ կարիքներ ունեցող անձանց դեպքերի մասնագիտացված կառավարման աջակցություն է տրամադրվել:



81 մտահոգության ներքո գտնվող անձ մասնակցել է խմբային հոգեբանական սեսիաների:



84 մտահոգության ներքո գտնվող անձ ստացել է եկամտի ստեղծման գործիքներ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Միգրացիոն ծառայության խնդրանքով ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը՝ Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը կյանքի կոչելու գործում: Այս աջակցության շրջանակում ՄԱԿ ՓԳՀ-ն վերջերս **ապաստանի համակարգում առկա կարողությունների բացերի եւ կարիքների համապարփակ գնահատում** նախաձեռնեց, որը փաստական հիմք կծառայի միգրացիոն հոսքերի կառավարման ազգային ծրագրի մշակման համար:
- Փախստականի կարգավիճակը սահմանող պետական լիազոր մարմինն **ապաստանի հայցման 18 գործերում օգտվել է փորձագիտական աջակցությունից**: Հաշվի առնելով Ուկրաինայում իրավիճակի հետեւանքով ապաստանի հայցերի թվի աճը, Միգրացիայի ծառայությանը **ծագման երկրի վերաբերյալ հավելյալ տեղեկատվական աջակցություն** է տրամադրվել:
- ՄԱԿ ՓԳՀ-ն **փախստականների կողմից ղեկավարվող երեք կազմակերպությունների** (ՓՂԿ) հետ դրամաշնորհային պայմանագրեր է կնքել՝ յուրաքանչյուրին տրված 4,000 ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհի միջոցով աջակցելու եւ նրանց կարողությունները զարգացնելու համար: Կազմակերպությունները ներկայացնում են Լեռնային Ղարաբաղից եւ Սիրիայից տեղահանված համայնքները եւ կիրականացնեն տեղահանված կանանց իրավագործմանը եւ **գենդերահեն բռնության (ԳԲ)** վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:
- Սեպտեմբերին ՄԱԿ ՓԳՀ-ն հանդիպել է վերջերս **գինված հակամարտության սրման** հետեւանքով տուժած տեղական համայնքների կառավարման մարմիններին եւ զրուցել սահմանամերձ բնակավայրերից տեղահանված 26 տնային տնտեսությունների (127 անձ) հետ: ՄԱԿ ՓԳՀ գրասենյակը շարունակում է **առաքելություններ իրականացնել** երկրի այն վայրերում, որտեղ տեղահանված անձինք կարող են գտնվել:

NFI

ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

- ՄԱԿ ՓԳՀ-ն Հայկական Կարմիր խաչի ընկերության միջոցով Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում բնակվող տեղահանված անձանց **հիգիենայի պարագաների 560 փաթեթ** է տրամադրել:
- Հայկական Կարմիր խաչի ընկերության միջոցով տեղահանված 111 երեխաների, որոնք **դպրոց են ընդունվել, տրամադրվել են դպրոցական պարագաներ**, իսկ մտահոգության ներքո գտնվող 12 անձի՝ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով ոչ դրամական օգնություն է տրվել:

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին համագործակցում է պետական եւ ոչ պետական շահակից մարմինների հետ՝ 2021-2025 թթ. ՄԱԿ-ի Կայուն զարգացման համագործակցության շրջանակի օգնությամբ խթանելով Հայաստանում Կայուն զարգացման Օրակարգ 2030-ի կենսագործման աշխատանքները:
- Միգրացիոն ծառայության հետ համատեղ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն 2022 թ. հուլիսին [երկօրյա աշխատաժողով կազմակերպեց](#) լրագրողների համար: Միջոցառումը ՄԱԿ ՓԳՀ- ՄԾ-ՄՄԿ «Մեդիա եւ միգրացիա» շարունակական ծրագրի մի բաղադրիչն էր, որը նվիրված էր Փախստականների համաշխարհային օրվան: Միջոցառմանը մասնակցում էին 20 լրագրողների եւ մեդիա փորձագետների խումբը, ինչպես նաեւ երկու փախստական Կոնգոյից եւ Իրանից, որոնք ներկայացրին իրենց կյանքի պատմությունները: Բացման նիստը վարում էր Միգրացիոն ծառայության ղեկավարը: Միջոցառմանը ներկայացվեցին նաեւ Հայաստանում եւ աշխարհում փախստականների իրավիճակի մասին տեղեկություններ եւ տվյալներ, հարց ու պատասխան, ցուցադրվեցին տեղեկատվական հարթակներ ու թեմատիկ տեսանյութեր, փախստականների հետ լրագրողական աշխատանքի օրինակելի սկզբունքներ եւ այլն:
- Հուլիսին ՄԱԿ ՓԳՀ-ն [ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հանդիպում կազմակերպեց](#) Գորիսում՝ Սյունիքի մարզում տեղահանության իրավիճակի եւ համայնքի առաջնահերթությունների մասին լիարժեք պատկերացում կազմելու համար: Երկօրյա միջոցառման ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ Սյունիքի մարզպետի եւ Գորիսի քաղաքապետի տեղակալի հետ, այց ՄԱԿ/ ՄԱԿ ՓԳՀ Գորիսի դաշտային գրասենյակ, ինչպես նաեւ Գորիսի Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, որը ՄԱԿ-ի/ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից աջակցություն է ստացել: ՄԱԿ-ի հայաստանյան թիմի անդամները հանդիպումներ ունեցան նաեւ տեղացի եւ տեղահանված երիտասարդների, կանանց եւ գործարարների խմբի հետ: Ինչպես նշեց Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատարը, հանդիպումներն օգնեցին գնահատել ընթացիկ ծրագրերի ազդեցությունը Սյունիքում եւ ՄԱԿ-ի ներկա ծրագրերն անկայուն միջավայրում ապրող համայնքների կարիքներին հարմարեցնելու ուղիներ գտնել:

Ֆինանսական տեղեկություններ

2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը փորձում է **13.8 միլիոն** ԱՄՆ դոլար հայթայթել՝ փախստականի իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման եւ իր տարեկան ծրագրի ծախսերը հոգալու նպատակով:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է Եվրամիությանը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ 2022 թվականին Հայաստանում իրականացվող իր ծրագրերին աջակցելու համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաեւ շնորհակալություն է հայտնում հետեւյալ դոնոր կառույցներին, որոնք 2022 թ. գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացրել են ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար.

[Շվեդիա](#) | [Նորվեգիա](#) | [Նիդերլանդներ](#) | [Դանիա](#) | [մասնավոր դոնորներ](#) [Իսպանիայից](#) | [Միացյալ Թագավորություն](#) | [մասնավոր դոնորներ](#) [Ճապոնիայից](#) | [Գերմանիա](#) | [Ֆրանսիա](#) | [Շվեյցարիա](#) | [մասնավոր դոնորներ](#) [Կորեայի Հանրապետությունից](#) | [մասնավոր դոնորներ](#) [ԱՄՆ-ից](#) | [Բելգիա](#) | [Իռլանդիա](#) | [Իտալիա](#) | [Ալժիր](#) | [Հայաստան](#) | [Ադրբեջան](#) | [Բուլղարիա](#) | [Կանադա](#) | [Կոստա Ռիկա](#) | [Էստոնիա](#) | [Ֆինլանդիա](#) | [Իսլանդիա](#) | [Քուվեյթ](#) | [Լիխտենշտեյն](#) | [Լիտվա](#) | [Մոնակո](#) | [Մոնտենեգրո](#) | [Նոր Զելանդիա](#) | [Պերու](#) | [Ֆիլիպիններ](#) | [Քաթար](#) | [Կորեայի Հանրապետություն](#) | [Սաուդյան Արաբիա](#) | [Սինգապուր](#) | [Թայլանդ](#) | [Թուրքիա](#) | [Ուրուգվայ](#) | [մասնավոր դոնորներ:](#)

** Առանց նախապայմանների հատկացված միջոցները որեւէ սահմանափակմամբ չկաշկանդված այն գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ն ինտրավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը:*

Մանրամասն տեղեկությունների համար այցելել [UNHCR Operational Data Portal](#) եւ [UNHCR Armenia website](#)

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ, Արամազդ Ղալամբարյան, արտաքին կապերի համակարգող, ghalamka@unhcr.org